Վերջին խօսքերի ժամանակ ռեսի ձայնը դողդողաց, նրա այրական դէմքը ընդունեց խիստ տխուր արտայայտութիւն: Ասլանը իր հարցերով զարթեցրեց նրա մէջ անցած ժամանակների մոռացուած յիշողութիւնները, որոնք որքան ցաւալի էին, նոյնքան եւ ուրախացուցիչ էին...

Ընթրիքը բաւական երկար տեւեց. նրանք սպասում էին «սիրելի» վարժապետին, որ գնացել էր մերձակայ լեռան հովիւների մօտ եւ պիտի վերադառնար երեկոյեան: Երբ տեսան, որ ուշացաւ, քահանան օրհնեց սեղանը: Վերջին օրհնութիւնը լի էր մի շարք բարեմաղթութիւններով: Նա օրհնեց կերրողներին, կերակրողներին, սեղանը պատրաստողներին, ոտքի վրայ ծառայողներին, նրանց կենդանիներին եւ ինջեցեալներին: Նա օրհնեց եւ նրանց, որ ուտելու հաց չունեն, որ քաղցած են, եւ բարեմաղթում էր նրանց համար նախախնամողի ողորմածութիւնը: Նա օրհնեց բոլոր նեղեալներին եւ կարօտեալներին եւ ամէնի համար լիութիւն ու անդորրութիւն էր խնդրում:

Երբ մեր սեղանը հաւաքեցին, դրսում, սրահի մէջ, երկու առանձին սեղաններ պատրաստեցան. մէկի շուրջը հաւաքեցան կանայք իրանց երեխաների հետ, իսկ միւսի շուրջը հաւաքեցան ոտքի վրայ ծառայող տղամարդիկ: Կանայք նստած էին մութի կողմում, իսկ տղամարդիկ՝ լոյսի կողմում. կանայք լուռ էին, իսկ տղամարդիկ խօսում էին, ծիծաղում էին, հանաքներ էին անում, մի քանիսը մինչեւ անգամ սկսեցին երգել: Ես առաջին անգամն էի լսում լեռնցի հայի երգը, որ, իր սարերի մելամաղձոտ արձագանքի նման՝ կոտրատւում էր, կոտրատւում էր երկարաձիգ լէ՛ — լե-ներո՛վ եւ ապա աստիճանաբար խլանում էր, եւ վերջին տխուր հնչիւնները հանգչում էին երգողի սրտի խորքում:

Մեզ մօտ եղած հիւրերը քաշոեցան սենեակի պատերի տակը, վառեցին երկար չիբուխները, սկսեցին ծխել: Ճոխ ընթրիքից յետոյ հանգստութիւն էին վայելում: Խիստ օտարոտի էր նրանց նստելու ձեւը այդ միջոցին. նրանք աւելի պառկած էին, քան նստած: Իւրաքանչիւրը ուսով պատին կռթնած, թեւքի մի արմունկով յատակին յենուած, ոտները կա՛մ մեկնել էր եւ կա՛մ ծնկները վեր բարձրացնելով՝ ոտներով մի տեսակ կամուրջ էր կազմել: Միայն ռեսը եւ քահանան ծալապատիկ նստած էին մեզ մօտ: Միւսները կատարեալ ազատութիւն էին վայելում եւ իրանց նստոածքին ինչ ձեւ որ ուզում էին, տալիս էին: Անկարելի էր այդ միջոցին մօտենալ նրանց չիբուխներին եւ կրակ վառել. մի այսպիսի յանդգնութեան համար պատրաստ կը լինէին արիւն թափել: